

# ՈՐՈՇՈՒՄ

## ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. դեկտեմբերի 11-ի նիստի

(արձ. N6)

1. ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. ռազմավարական ծրագրի նախապատրաստման աշխատանքների ընթացքը համարել բավարար:

2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումներին բարելավման գործողությունների պլան-ժամանակացույցով նշված ժամկետներում լրացնել բացթողումները,

2.1 ԵԹԿՊԻ-ի բարելավման գործողությունների պլան-ժամանակացույցով 2017թ. համար սահմանված ժամկետներում ամբիոնների համար նախատեսված գործողությունների կատարման արդյունքները քննարկելու նպատակով հրավիրել ամբիոնների վարիչների հավաք,

2.2 հանձնարարել Որակի ապահովման կենտրոնին ստեղծել և ԳԽ հաստատմանը ներկայացնել բենչմարկինգի անցկացման կանոնակարգ:

3. 2017-2018 ուս. տարվա աշնանային կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման ընթացքը համարել բավարար,

3.1 2017-2018 ուս. տարվա աշնանային կիսամյակի քննաշրջանը վերահսկելու նպատակով ստեղծել հանձնաժողովներ՝ ընդգրկելով ռեկտորի օգնականին, ՈԱԿ-ի աշխատակիցներին, դեկանատների և Ուսխորհրդի ներկայացուցիչներին,

3.2 ուսման վարձավճարների մուծման վերջնաժամկետ սահմանել ս.թ. դեկտեմբերի 22-ը: Բացառիկ դեպքերում թույլատրել պարտավորագրերի ընդունում:

Ուսման վարձավճարների հավաքագրման կապակցությամբ հանձնարարել դեկաններին և կուրսերի ղեկավարներին համապատասխան բացատրական աշխատանք տանել ուսանողների հետ:

4. ԵԹԿՊԻ-ի կառավարման խորհրդի աշխատանքների նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

5. Հանձնարարել ԵԹԿՊԻ-ի PR պատասխանատու Է. Բարսեղյանին մինչև դեկտեմբերի 25-ը հրավիրել մամուլի ասուլիս և հանրությանը ներկայացնել ինստիտուտի վերջին ձեռքբերումները,

5.1 հանձնարարել Ընդհանուր բաժնին մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը պատրաստել ամանորյա շնորհավորական բացիկները,

5.2 հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին 2018թ. հունվարին ներկայացնել Արցախի հետ կնքվելիք համաձայնագրի բովանդակության նախագիծը:

**Գիտքարտուղար**

**Գ.Հովհաննիսյան**